

ՆԵՐԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԿԱՏԱՐՆԱԳՈՐԾՈՒՄԸ
ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀԱԿՈՐ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Արտադրական միավորումների, ձեռնարկությունների փոխադրումը պլանավորման և տնտեսական խթանման նոր համակարգի սերտորեն կապված է լրիվ տնտեսական հաշվարկի ներդրման և հետագա կատարելագործման հետ: Այդ կապակցությամբ ՍՄԿԿ XXVII համագումարում նշվեց, որ «տնտեսական մեխանիզմի հետագա կատարելագործման, նրա բոլոր տարրերի կոմպլեքսային մշակման աշխատանքում առանձնահատուկ կարևոր նշանակություն ունի տնտեսական հաշվարկի խորացումը: ...Ձեռնարկությունների իրավունքների ընդլայնման՝ տնտեսական նոր մեխանիզմի մեջ առկա գիծը պահանջվող հատույց կտա լուրջ աշխատանքներ, եթե նրա սկզբունքները թափանցեն արտադրության բոլոր օղակները՝ ընդհուպ մինչև բրիգադները: և աշխատատեղը»¹: Այստեղից հետևում է, որ լրիվ տնտեսական հաշվարկը ենթադրում է ոչ միայն ընդլայնել արտադրական միավորումների, ձեռնարկությունների օպերատիվ-տնտեսական ինքնուրույնությունը, բարձրացնել աշխատողների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը, այլև նրա սկզբունքները տարածել արտադրամասերի, տեղամասերի, բրիգադների, վարչակառավարչական ապարատի արտադրատնտեսական գործունեության վրա, այսինքն՝ վերջիններիս գործունեությունն իրականացնել ներարտադրական տնտեսական հաշվարկի հիման վրա:

Ներարտադրական տնտեսական հաշվարկը արտահայտում է ձեռնարկության բոլոր կառուցվածքային օղակների՝ ձեռնարկության կառավարման ապարատի, արտադրական ստորաբաժանումների և առանձին աշխատողների միջև եղած փոխհարաբերությունները: Այն պետք է դիտել որպես ձեռնարկության տնտեսական հաշվարկի շարունակություն և զարգացում: Ներարտադրական տնտեսական հաշվարկը հանդիսանում է ձեռնարկության տնտեսական հաշվարկի ենթահամակարգը, նրա բաղկացուցիչ մասը և վերջինիս հետ կապված է փոխազդեցության ու միասնության սկզբունքով: Ներարտադրական տնտեսական հաշվարկը հենվում է ձեռնարկության տնտեսական հաշվարկի սկզբունքների վրա: Այդ երկու հասկացությունների թե՛ էությունը, թե՛ սկզբունքները նույնն են: Սակայն սկզբունքների միասնությունը չի նշանակում, որ ներարտադրական տնտեսական հաշվարկի և ձեռնարկության տնտեսական հաշվարկի իրականացման ձևերն ու մեթոդները նույնն են: Դրանք տարբեր են, քանի որ մի դեպքում որպես կառավարման օբյեկտ հանդես է գալիս ձեռնարկությունն ամբողջությամբ վերցրած, իսկ մյուս դեպքում՝ նրա առանձին ստորաբաժանումները: Ձեռնարկության տնտեսական հաշվարկի սկզբունքների իրականացման ձևերն ու մեթոդները բխում են ժողովրդական տնտեսության մեջ նրա, որպես ինքնուրույն ապրանքարտադրողի, գրաված դիրքից, իսկ ներարտադրական տնտեսական հաշվարկինը՝ ձեռնարկության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների ներսում եղած հարաբերություններից: Ձեռնարկության արտադրամասերը, տեղամասերը, բրիգադներն իրենց արտադրանքը

¹ Ն. Ի. Ռիժկով, ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների մասին: Զեկուցում ՍՄԿԿ XXVII համագումարին, 1986 թ. մարտի 3-ին, Երևան, 1986, էջ 50, 52:

չեն վաճառում, չեն կարող ինքնուրույն գնումներ կատարել, պայմանագրեր կնքել, հաշվարկային հաշիվ ունենալ պետական բանկում և այլն:

Ինչպես ձեռնարկության, այնպես էլ ներարտադրական տնտեսական հաշվարկի նպատակը արտադրության արդյունավետության բարձրացումն է: Ձեռնարկության և ներարտադրական տնտեսական հաշվարկի նպատակը նույնն է՝ արտադրական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների նվազագույն ծախսումներով կատարել պլանային առաջադրանքները և ապահովել վերջնական արդյունքների ստացումը: Ներարտադրական տնտեսական հաշվարկը կոշված է ապահովելու ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, բարձրացնելու աշխատողների ձեռնբեցույցուն արտադրության աճի ռեզերվների բացահայտման և արդյունավետ օգտագործման գործում: Վերջին հաշվով, ներարտադրական տնտեսական հաշվարկը շաղկապում է առանձին աշխատողների, բրիգադների, տեղամասերի և արտադրամասերի կոլեկտիվների շահերը ձեռնարկության շահերի հետ և լրացնում է ձեռնարկության տնտեսական հաշվարկը:

Ներարտադրական տնտեսական հաշվարկի հետագա զարգացման առանցքային պրոբլեմներից մեկը արտադրական միավորումների, ձեռնարկությունների կառուցվածքային ստորաբաժանումների պլանավորման, գնահատման և խթանման ցուցանիշների համակարգի կատարելագործումն է:

Տնտեսավարման նոր պայմաններում զգալի փոփոխություններ են մտցվում արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման ցուցանիշների, նորմատիվների և լիմիտների համակարգում: Նախ, զգալիորեն կրճատվում է արտադրական միավորումների, ձեռնարկությունների տարեկան և հնգամյա պլաններում սահմանվող դիրեկտիվային ցուցանիշների, նորմատիվների, լիմիտների թիվը: Երկրորդ, արտադրական միավորումների և ձեռնարկությունների տնտեսական գործունեության գնահատումն ու սոցիալիստական մրցության արդյունքների ամփոփումն իրականացվում է, ամենից առաջ ելնելով իրացված արտադրանքի ծավալի (հաշվի առած կնքված տնտեսական պայմանագրերին համապատասխան մատակարարման առաջադրանքները) կատարման աստիճանից: Երրորդ, վերադասի կողմից սահմանվող դիրեկտիվային ցուցանիշների կրճատմանը զուգընթաց բարձրացվում է կայուն, երկարատև գործողության տնտեսական նորմատիվների դերը որպես արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության վրա հնգամյա պլանների ներգործության կարևոր լծակ: Չորրորդ, արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման, խթանման ժամանակ բազմակողմանիորեն կիրառվում են տնտեսական աճի գործոնները: Այսպես, հնգամյա պլաններում նորմատիվային զուտ արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող աշխատավարձի ֆոնդի և խրախուսման ֆոնդերի կազմավորման նորմատիվների փոխարեն սահմանվում են նորմատիվային զուտ արտադրանքի յուրաքանչյուր տոկոս հավելածի համար աշխատավարձի ֆոնդի հավելածի նորմատիվ և խրախուսման ֆոնդերի հավելածի նորմատիվներ:

Արտադրական միավորումների, ձեռնարկությունների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների արտադրատնտեսական գործունեության պլանավորման, գնահատման, խթանման ցուցանիշներն ու չափանիշները սերտորեն փոխկապված են: Ինչպես ձեռնարկությունը չի կարող գործել և զարգանալ ժողովրդական տնտեսության ամբողջ համակարգից մեկուսացված, այնպես էլ ստորաբաժանումը՝ ամբողջ ձեռնարկությունից և դրա ստորաբաժանումներից անկախ: Հետևաբար, արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման ցուցանիշների համակարգի մեջ տեղի ունեցած փոփոխությունները պահանջում են վերակառուցել ներմիավորման պլանավորումը, այսինքն՝ մը-

շակել միավորումների, ձեռնարկությունների կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի գնահատման նոր ցուցանիշներ և չափանիշներ:

Արտադրական միավորումների, ձեռնարկությունների կառուցվածքային ստորաբաժանումների տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման ցուցանիշների համակարգը, մեր կարծիքով, պետք է բավարարի հետևյալ հիմնական պահանջները. ա) ճիշտ և առավել լրիվ արտահայտի ստորաբաժանումների տնտեսական գործունեության արդյունքները, բ) անմիջականորեն կախված լինի տվյալ ստորաբաժանման արտադրատնտեսական գործունեությունից և հնարավորություն տա օբյեկտիվորեն գնահատել ձեռնարկության վերջնական արդյունքների մեջ յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից ներդրումը, գ) սերտորեն կապվի ձեռնարկության տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման ցուցանիշների համակարգի հետ, դ) մի կողմից ապահովի յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքի շաղկապումը ձեռնարկության գործունեության ընդհանուր արդյունքների հետ, իսկ մյուս կողմից՝ ստորաբաժանմանը հնարավորություն տա ինքնուրույն ընտրելու իր առջև դրված խնդիրների լուծման ուղիները, ե) խթանի յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատողներին՝ վերջնական արդյունքների ապահովման գործում:

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1985 թ. հուլիսի 12-ի «Տնտեսավարման նոր մեթոդները լայնորեն տարածելու և գիտատեխնիկական առաջադիմության արագացման վրա դրանց ներգործությունն ուժեղացնելու մասին» որոշմամբ պահանջվում է միավորումների, ձեռնարկությունների բոլոր ստորաբաժանումների գործունեությունն է՛լ ավելի նպատակամղել արտադրության մեջ գիտատեխնիկական առաջադիմության և առաջավոր փորձի ակտիվ ներդրմանը, ժողովրդատնտեսական վերջնական արդյունքների ձեռքբերմանը, արտադրության արդյունավետության ու աշխատանքի որակի բարձրացմանը: Այստեղից հետևում է, որ արտադրական միավորումների, ձեռնարկությունների կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի գնահատման ցուցանիշներն ու չափանիշները ամենից առաջ պետք է նպատակամղվեն պայմանագրային պարտավորությունների անվերապահ կատարմանը, արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, արտադրանքի որակի բարձրացմանը, վերջնական արդյունքների ապահովմանը: Եթե մինչև տնտեսական գիտափորձի անցկացումն արտադրամասերի գործունեությունն ուղղված էր հիմնականում արժեքային ծավալային ցուցանիշների (ապրանքային արտադրանք, նորմատիվային մշակման արժեք, նորմատիվային զուտ արտադրանք և այլն) կատարմանը, ապա ներկայումս՝ պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Պայմանագրային պարտավորությունների կատարումն անմիջականորեն կախված է հիմնական արտադրամասերի և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների կողմից սահմանված օրացուցային գրաֆիկով արտադրանքի անվանացանկի պլանի կատարումից: Հետևաբար, հիմնական արտադրության ստորաբաժանումների տնտեսական գործունեության գնահատման ժամանակ առաջին հերթին պետք է ելնել իրացված արտադրանքի ծավալի (հաշվի առած տնտեսական պայմանագրերին համապատասխան մատակարարման առաջադրանքները) կատարման ցուցանիշի տնտեսական բովանդակությանը համանման ցուցանիշների պլանի կատարումից: Այսինքն, դրանք պետք է պարտադիր կարգով իջեցվեն հիմնական արտադրամասերին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսավարման նոր պայմաններում աշխատող արտադրական միավորումների և ձեռնարկությունների զգալի մասը հիմնական արտադրամասերի տնտեսական գործունեության պլանավորման ու գնահատման նպատակով կիրառում է այդպիսի ցուցանիշներ: Այսպես, Մինսկի էլեկտրատեխնիկական գործարանում նախապատրաստական արտադրամասերին իջեցվում է ներգործարանային կոոպերացված մատակարարումների ծավալը, հավաքման արտադրամասերին՝ իրացման պահեստների մատակարարումների ծավալը, պատրաստի արտադրանքի բեռնման և փաթեթավորման արտադրա-

մասերին՝ մատակարարումների ծավալը սպառողներին²։ Մոսկվայի «Մոնոմետր» արտադրական միավորումում հավաքման արտադրամասերին իջեցվում է պայմանագրերի կատարումը՝ առաջադրված արտադրության ծավալի սահմաններում³, իսկ Վլադիմիրի էլեկտրաշարժիչների գործարանի հիմնական արտադրամասերին՝ ապրանքային արտադրանքի ծավալը՝ հաշվի առած պլանային տեսականու կատարումը⁴։ «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումում հիմնական արտադրամասերին իջեցվում է իրացված արտադրանքի ծավալը՝ հաշվի առած դետալների, հանգուցների, իրերի կոմպլեկտային հանձնումը, «Հայէլեկտրաշարժիչ» արտադրական միավորումում՝ արտադրողական պետական բաժնի գրաֆիկով սահմանված անվանացանկի պլանի կատարումը, իսկ Նրեանի էլեկտրաապարատների գործարանում՝ պայմանագրերին համապատասխան արտադրանքի մատակարարման ծավալը, «Օպերատիվության գործակիցը»⁵ և «Ռիթմիկության գործակիցը»⁶։

Արտադրական միավորումների և ձեռնարկությունների հիմնական արտադրամասերի տնտեսական գործունեության պլանավորման և գնահատման կարևոր ցուցանիշներից մեկը աշխատանքի արտադրողականությունն է։ Արտադրության արդյունավետության բարձրացումը և նրա զարգացման ինտենսիվ գործոնների բազմակողմանի օգտագործումը, ինչպես նաև աշխատանքի որակի բարելավումը սերտորեն կապված են աշխատանքի արտադրողականության չափման և պլանավորման մեթոդների կատարելագործման հետ։

Աշխատանքի արտադրողականության հաշվառման և պլանավորման հիմքում ընկած են արտադրանքի ծավալի ցուցանիշները։ Տնտեսագիտական գրականության մեջ հիմնական արտադրամասերի և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների արտադրանքի ծավալի և աշխատանքի արտադրողականության հաշվառման ու պլանավորման ցուցանիշների ընտրության վերաբերյալ գոյություն ունեն տարրեր, հաճախ իրարամերժ կարծիքներ։ Այսպես, օրինակ, տնտեսագետների մի մասը հիմնական արտադրամասերի արտադրանքի ծավալի հաշվառման և պլանավորման համար առաջարկում է կիրառել ապրանքային արտադրանքը (կամ իրացված արտադրանքի ծավալը)⁷։ Մեր կարծիքով այդ տեսակետն ընդունելի չէ, քանի որ ապրանքային և իրացված արտադրանքի ցուցանիշների օգտագործման պրակտիկան ցույց տվեց, որ մի շարք դեպքերում դրանք ճիշտ չեն բնութագրում ինչպես ամբողջությամբ արտադրական միավորումների և ձեռնարկությունների, այնպես էլ հիմնական արտադրամասերի տնտեսական գործունեությունը։ Ապրանքային և իրացված արտադրանքի ծավալների մեծությունը կախված է թողարկվող արտադրանքի անվանացանկի և տեսականու փոփոխությունից, այսինքն՝ նյութատարությունից և շահութաբերությունից (հումքի և նյութերի գների, կոոպերացված մատակարարումների ծավալի, արտադրության կառուցվածքային ու կադրակերպչական տեղաշարժերի փոփոխություններից)։ Ապրանքային և իրացված արտադրանքներն ընդգրկում են ինչպես կենդանի, այնպես էլ առարկայացած աշխատանքի։

² «Плановое хозяйство», 1984, № 9, с. 65.

³ Նույն տեղում, 1985, № 1, էջ 45։

⁴ Նույն տեղում, 1984, № 8, էջ 51։

⁵ Օպերատիվության գործակիցը հաշվարկվում է պլանային առաջադրանքների սահմաններում ըստ անվանացանկի և սահմանված ժամկետներում թողարկված արտադրանքի ծավալը հարաբերելով իրացված արտադրանքի ընդհանուր ծավալի վրա։

⁶ Ռիթմիկության գործակիցը որոշվում է ամսվա տվյալ տասնօրյակում թողարկված արտադրանքի ծավալը հարաբերելով ամսվա թողարկման պլանային ծավալի վրա։

⁷ В. Н. Гончаров, Л. Д. Маринченко, А. В. Козаченко, Совершенствование системы показателей внутрихозяйственного хозрасчета (Тезисы докладов всесоюзной научно-практической конференции «Вопросы теории и практики совершенствования механизма управления народным хозяйством в свете решений XXVI съезда КПСС»), т. II, М., 1981, с. 180.

ծախսումները: Արտադրամասի թողարկած արտադրատեսակների մեջ կենդանի և առարկայացած աշխատանքի հարաբերակցությունը տարբեր է, ուստի կենդանի աշխատանքի միեկնույն ծախսումներով հնարավոր է ստանալ ապրանքային և իրացված արտադրանքի մեծ կամ փոքր ծավալներ: Կենդանի աշխատանքային ծախսումների միավորին որքան շատ առարկայացած աշխատանք է ընկնում, այնքան մեծ կլինի ապրանքային և իրացված արտադրանքների ծավալները: Արտադրանքի ծավալը ապրանքային և իրացված արտադրանքով հաշվառելու դեպքում ինչպես արտադրական միավորումները և ձեռնարկությունները, այնպես էլ արտադրամասերը ձգտում են ավելացնել այն արտադրատեսակների թողարկումը, որոնք պահանջում են համեմատաբար շատ նյութական ծախսեր և ունեն բարձր գներ, և ընդհակառակը՝ ձգտում են կրճատել այն արտադրատեսակների թողարկումը, որոնք պահանջում են համեմատաբար մեծ աշխատանք և ունեն ցածր գներ: Որքան թանկ է նստում արտադրանքի թողարկումը արտադրամասի վրա, այնքան բարձր են տնտեսական գործունեության արդյունքները:

Տնտեսագետների մեկ այլ խումբ առաջարկում է հիմնական արտադրամասերի արտադրանքի ծավալը չափել նորմա-ժամերով⁶: Մեր կարծիքով դժվար է համաձայնվել նաև այդ տեսակետի հետ, քանի որ նորմա-ժամերով արտադրանքի ծավալի չափման ցուցանիշն անբավարար է արտացոլում աշխատանքի որակի տարբերությունները: Այդ ցուցանիշի կիրառումը, նախ, արտադրամասերին խթանում է ավելացնելու ցածր տարակարգի աշխատանքների ծավալը, երկրորդ, հնարավորություն չի տալիս լիովին արտացոլելու արտադրամասի կատարած իրական աշխատանքների ծավալը՝ կապված դրանց բարդության հետ, երրորդ, չի նպաստում հնացած նորմաների վերանայմանը: Բացի այդ, նորմա-ժամերով արտադրանքի ծավալի չափման ցուցանիշն անմիջականորեն կապված է ֆինանսական ցուցանիշների հետ, չի վերահսկվում հաշվապահություն կողմից, որի հետևանքով էլ դրա ծավալի մեջ շատ հաճախ մտցվում են ոչ ապրանքային բնույթի աշխատանքներ:

Տնտեսագիտական գրականության մեջ հիմնական արտադրամասերի արտադրանքի ծավալի և աշխատանքի արտադրողականության հաշվառման ու պլանավորման համար առաջարկվում է օգտագործել նաև նորմատիվային աշխատավարձը⁷: Այսպես, «Գնահատման ցուցանիշները ձեռնարկությունների տնտեսական հաշվարկի համակարգում» աշխատության մեջ նշվում է, որ այդ ցուցանիշը նախ, առավելագույն չափով է արտացոլում արտադրամասի իրական ջանքերը և պայմաններ է ստեղծում հավասարապես ձեռնտու արտադրանքի թողարկման համար, երկրորդ, պատրաստի իրերի, դետալների, հանգույցների և կիսաֆաբրիկատների թողարկման համար սահմանված արտադրական բանվորների աշխատավարձի նորմատիվները հանդիսանում են զուտ արտադրանքի նորմատիվների հիմքը, երրորդ, ձեռնարկություններում արտադրանքի ծավալը նորմատիվային զուտ արտադրանքով պլանավորելու պայմաններում նորմատիվային աշխատավարձի կիրառումը իրական հիմք է ստեղծում ներարտադրական տնտեսական հաշվարկի և ձեռնարկությունների աշխատանքի վերջնական արդյունքների գնահատման ցուցանիշները միասնական սուբորդինացված համակարգի մեջ ընդգրկելու համար⁸: Ա. Սիգինկինը նույնպես գրտնում է, որ հիմնական արտադրամասերի արտադրանքի ծավալի պլանավորման

⁶ «Система внутреннего хозяйственного расчета и экономического анализа станко-строительного завода», М., 1976, с. 37.

⁷ А. М. Лайков, И. Г. Иванников, С. В. Ильдеменов, Совершенствование внутрипроизводственного хозрасчета в условиях экономического эксперимента (Тезисы докладов всесоюзной научной конференции «Крупномасштабный экономический эксперимент и совершенствование хозяйственного механизма»), М., 1985, с. 42.

⁸ В. И. Кошкин, Е. Т. Гайдар, Ф. С. Ковалев, Оценочные показатели в системе хозрасчета предприятий, М., 1980, с. 91—92.

համար գերադասելի է օգտագործել նորմատիվային աշխատավարձը: Նա մասնավորապես նշում է, որ այդ ցուցանիշը հաշվի է առնում արտադրանքի թողարկման վրա կատարված աշխատանքի ինչպես քանակը, այնպես և որակը, հնարավորություն է տալիս կիրառել աշխատավարձի ֆոնդի պլանավորման նորմատիվային մեթոդները և ավելի ճիշտ հսկել դրա ծախսումները⁹:

Ճիշտ է, նորմատիվային աշխատավարձի ցուցանիշը հաշվի է առնում նաև արտադրանքի թողարկման վրա կատարված աշխատանքի որակը, սակայն դրա հետ մեկտեղ այն ղեկը չէ թերութիւններից: Արտադրանքի ծավալը նորմատիվային աշխատավարձի ցուցանիշով հաշվառելու եղանակն ըստ էության աշխատանքային ժամերի հաշվառման եղանակն է՝ հաշվի առած բանվորների որակավորումը. հետևաբար, դրան բնորոշ են աշխատանքային եղանակի բոլոր թերութիւնները: Մեր կարծիքով Մ. Նաղարովը ճիշտ է նշում, որ նորմատիվային աշխատավարձը աշխատանքի արտադրողականության չափման համար քիչ է կիրառելի, քանի որ այն համարժեք չէ նոր ստեղծված արժեքին¹⁰: Բացի այդ, ներկայումս աշխատանքի արտադրողականության որոշման ժամանակ պահանջվում է հաշվի առնել ոչ միայն կենդանի, այլև առարկայացած աշխատանքի ազդեցությունը, քանի որ գիտատեխնիկական առաջընթացի արագացումը հանգեցնում է առարկայացած աշխատանքի տեսակարար կշռի բարձրացմանը: Հետևաբար, նորմատիվային աշխատավարձը չի կարող ճիշտ արտացոլել ինչպես աշխատանքի արտադրողականության, այնպես էլ աշխատանքի արտադրողականության ու միջին աշխատավարձի ցուցանիշների աճի հարաբերակցության փոփոխությունները:

Որոշ տնտեսագետներ էլ հիմնական արտադրամասերի արտադրանքի ծավալի և աշխատանքի արտադրողականության հաշվառման և պլանավորման համար առաջարկում են օգտագործել նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշը¹¹: Այսպես, Լ. Նազարյանը գրում է, որ «իրականում նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշի առավելություններն ու գործնական արդյունավետությունը լիովին ի հայտ են գալիս ձեռնարկության ներարտադրական օղակներում այն կիրառելու դեպքում: Դրա օգտագործումը ներգործարանային պլանավորման ընթացքում առանձին արտադրամասերի, տեղամասերի և բրիգադների կողմից կարող է ապահովել աշխատանքի արտադրողականության նշանակալի աճ»¹²: Սակայն 11-րդ հնգամյակի տնտեսավարման փորձը ցույց տվեց, որ համախառն, ապրանքային և իրացված արտադրանքի ցուցանիշների համեմատությամբ նորմատիվային զուտ արտադրանքը, մի շարք հարցերում որոշակի առավելություններ ունենալով հանդերձ, զերծ չէ էական թերություններից: Այսպես, զուտ արտադրանքի նորմատիվները պայմանական չափիչներ են, մեծածախ գներից կտրված են և ճիշտ չեն արտացոլում ինչպես արժեքի շարժը, այնպես և գնի մեջ նոր ստեղծված արժեքի նորմատիվային մեծությունը: Հետևաբար, նորմատիվային զուտ արտադրանքով հաշվարկված ցուցանիշների մակարդակն ու դինամիկան նույնպես կտրված են զուտ արտադրանքի իրական շարժից և ֆինանսական ցուցանիշներից, ուստի և ճիշտ չեն արտացոլում տնտեսական երևույթների, պրոցեսների իրական վիճակը: Այդ ցուցանիշի օգտագործումը զգալիորեն բարդացնում է ժողովրդական տնտեսության մեջ բնաիրային և արժեքային համամասնությունների հավասարակշռության ապահովումը: Նորմատիվային զուտ արտադրանքի ցուցանիշի կի-

⁹ «Вопросы экономики», 1984, № 10, с. 45.

¹⁰ М. Г. Назаров, Производительность труда: измерение, анализ, резервы, М., 1977, с. 48.

¹¹ Н. Г. Луковцова, Т. А. Погорелова, Опыт применения показателя нормативной чистой продукции в текстильной промышленности (Тезисы докладов научной конференции «Крупномасштабный экономический эксперимент и совершенствование хозяйственного механизма»), М., 1985, с. 40.

¹² «Լենինյան ուղիով», 1985, № 10, էջ 53:

րառման հետ կապված որոշակի դժվարություններ են առաջանում նաև նորմատիվների վերանայման ժամանակ, երբ էականորեն փոփոխվում են կոոպերացման պայմանները:

Արտադրությունը զարգացման ինտենսիվ ուղի է տնտեսավարման նոր մեթոդների փոխադրելու պայմաններում աշխատանքի արտադրողականության հաշվառման և պլանավորման ցուցանիշները պետք է համեմատաբար ճիշտ արտացոլեն կոլեկտիվի աշխատանքային ծախսումները և ստացված արդյունքները: Մեր կարծիքով նշված պահանջներին բավարարում է զուտ արտադրանքով հաշվարկված աշխատանքի արտադրողականության ցուցանիշը: Զուտ արտադրանքը բնութագրում է արտադրական կոլեկտիվների սեփական աշխատանքային ծախսումների արդյունքները, ինչպես նաև առարկայացած աշխատանքի տնտեսումն ու արտադրության արդյունավետությունը:

Արտադրական միավորումների, ձեռնարկությունների հիմնական արտադրամասերի տնտեսական գործունեության պլանավորման և գնահատման կարևոր ցուցանիշներից է նաև աշխատավարձի ֆոնդը: Տնտեսաշարժային հարաբերությունների զարգացման պայմաններում աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացումը սերտորեն առնչվում է աշխատավարձի ֆոնդի կազմավորման պրոբլեմի հետ: Վերջին տարիներին արդյունաբերության մեջ լայնորեն կիրառվում է աշխատավարձի ֆոնդի պլանավորման նորմատիվային մեթոդը, որի դեպքում ձեռնարկության իջեցվում է միավոր արտադրանքի հաշվով աշխատավարձի ծախսումների նորմատիվ: Աշխատավարձի ֆոնդը պլանային ժամանակաշրջանի համար որոշվում է՝ ելնելով նախատեսվող արտադրության ծավալից և մեկ ուսուցիչ նորմատիվային զուտ արտադրանքին ընկնող աշխատավարձի ծախսումների նորմատիվից:

Աշխատավարձի ֆոնդի պլանավորման նորմատիվային մեթոդն աշխատավարձի ֆոնդը ավելի սերտորեն է կապում ձեռնարկության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման ցուցանիշների համակարգի հետ: Այս մեթոդն առավել ճիշտ է զուգակցում հասարակության, կոլեկտիվի շահերն անձնական շահի հետ, հանգամանորեն հաշվի է առնում արտադրության և աշխատանքի կազմակերպման պայմանները և աշխատողների վարձատրման չափը ուղղակի կախման մեջ է դնում ձեռնարկության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների վերջնական արդյունքներից: Սակայն աշխատավարձի ֆոնդի պլանավորման նորմատիվային մեթոդը դեռևս լայն տարածում չի գտել ներարտադրական տնտեսական հաշվարկի համակարգում: Մինչդեռ «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղություններում» խնդիր է դրվում նորմատիվային մեթոդները լայնորեն օգտագործել կառավարման և պլանավորման բոլոր մակարդակներում:

Հիմնական արտադրամասերում աշխատավարձի նորմատիվային ֆոնդը որոշվում է տվյալ արտադրամասի արտադրական ծրագրի, արտադրանքի (իրի կամ ծառայության) միավորին ընկնող աշխատավարձի ծախսումների նորմատիվների և աշխատանքի արտադրողականության աճի հաշվին աշխատավարձի ֆոնդի պլանային իջեցման հիման վրա: Տնտեսագիտական գրականության մեջ աշխատավարձի նորմատիվային ֆոնդն առաջարկվում է հաշվարկել հետևյալ բանաձևի¹³ միջոցով՝

$$З_{\text{н}} = \sum_{i=1}^n Q_i \times З_{\text{н}i} \times J,$$

որտեղ $З_{\text{н}}$ -ն աշխատավարձի նորմատիվային ֆոնդն է, Q_i -ն i տեսակի արտադրանքի քանակն է, $З_{\text{н}i}$ -ն i տեսակի արտադրանքի միավորին ընկնող աշխատավարձի ծախսումների նորմատիվներն են, J -ն աշխատանքի արտադրո-

¹³ «Вопросы экономики», 1984, № 10, с. 46.

զականության աճի հաշվին աշխատավարձի իջեցման ինդեքսն է, իսկ արտադրանքի տեսակների քանակն է:

Մեր կարծիքով, աշխատավարձի ֆոնդի պլանավորման ժամանակ անհրաժեշտ է մեկ ուրիշ արտադրանքին ընկնող աշխատավարձի ծախսումների նորմատիվը սահմանել ոչ թե նորմատիվային զուտ արտադրանքի, այլ զուտ արտադրանքի նկատմամբ: Զուտ արտադրանքի հիման վրա հաշվարկված աշխատանքի արտադրողականության ցուցանիշը անմիջական կապ է ստեղծում ծախսումների և աշխատանքի վարձատրման միջև: Այս դեպքում, նախ, առարկայացած աշխատանքի տնտեսումը (գերաժախսը) ազդում է աշխատավարձի ֆոնդի մեծության վրա, երկրորդ, աշխատավարձի ֆոնդի անհիմն ավելացումը, կապված արտադրանքի արժեքի մեջ հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների բաժնի մեծացման հետ, բացառվում է:

Տնտեսավարման նոր պայմաններում էական փոփոխությունների է ենթարկվում աշխատավարձի ֆոնդի պլանավորման նախկինում գոյություն ունեցող կարգը: Այն ձևավորվում է երկու տարրերի գումարից՝ բազիսային տարվա աշխատավարձի ֆոնդի (նախորդ տարվա աշխատավարձի ֆոնդն է) մեծությունից և դրա հավելածից: Իր հերթին աշխատավարձի ֆոնդի հավելածը որոշվում է համապատասխան նորմատիվի միջոցով: Արտադրանքի ընդհանուր ծավալի հավելածի յուրաքանչյուր տոկոսի համար սահմանվում է աշխատավարձի ֆոնդի հավելածի նորմատիվ: Այստեղից հետևում է, որ տնտեսավարման նոր պայմաններում վերանում է պլանային ցուցանիշների մակարդակով աշխատավարձի ֆոնդի պլանավորման պրակտիկան և վերջինիս աճի հնարավորությունները ուղղակի կախման մեջ են դրվում արտադրանքի ծավալի իրական աճից: Հետևաբար, ինչպես արտադրական միավորումները, ձեռնարկությունները, այնպես էլ դրանց կառուցվածքային ստորաբաժանումներն այլևս չեն ձգտի անընդհատ կարգավորումներ մտցնել պլանների մեջ, քանի որ աշխատավարձի ֆոնդի մեծությունը որոշվում է պլանային տարում թողարկվող փաստացի արտադրանքի ծավալով:

Արտադրության ինտենսիվացումը և նրա արդյունավետության բարձրացումը, գիտատեխնիկական առաջադիմության արագացումը, ժողովրդական տնտեսության և բնակչության պահանջարկների բավարարումը սերտորեն կապված են արտադրանքի որակի բարելավման հետ: Որակի պարզեման ընդունվում է արտադրական միավորումների, ձեռնարկությունների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների տնտեսական գործունեության բոլոր կողմերը: Այդ կապակցությամբ Մ. Ս. Գորբաչովը նշել է. «Գիտատեխնիկական առաջընթացի, արտադրության կազմակերպման մակարդակի, աշխատանքի կոլտուրայի և կարգապահության ամենաօբյեկտիվ և ընդհանրացնող ցուցանիշը արտադրանքի որակն է»¹⁴: Այստեղից հետևում է, որ արտադրական միավորումների, ձեռնարկությունների հիմնական արտադրամասերի տնտեսական գործունեության պլանավորման և գնահատման համար անհրաժեշտ է պարտադիր կարգով սահմանել նաև որակի ցուցանիշը: Հիմնական արտադրամասերում թողարկվող արտադրանքի (իրերի, կիսաֆաբրիկատների, դետալների, հանգույցների) որակը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. արտադրության ընդհանուր ծավալում որակի բարձր կարգ ունեցող արտադրանքի տեսակարար կշիռ, արտադրանքի հանձնում առաջին ներկայացմամբ, խոտանից առաջացած կորուստների կրճատում, բողոքագրերի թվի կրճատում և այլն: Ընդ որում, ձեռնարկությունում կոնկրետ ցուցանիշի ընտրությունը կատարում են, ելնելով արտադրամասերի կատարած ֆունկցիաներից և առանձնահատկություններից: Արտադրության ընդհանուր ծավալում որակի բարձր կարգ ունեցող արտադրանքի տեսակարար կշիռի ցուցանիշը, կարծում ենք, նպատակա-

¹⁴ Մ. Ս. Գորբաչով, Կոնսակցության տնտեսական քաղաքականության արժատական հարցը: Զեկուցում գիտատեխն. առաջընթացի արագացման հարցերի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցած խորհրդակցությունում, 1985 թ. հունիսի 11-ին, Նրևա, 1985, էջ 23:

հարմար է կիրառել հավաքման արտադրամասերում, իսկ արտադրանքի հանձնումն առաջին ներկայացմամբ ցուցանիշը՝ նախապատրաստական արտադրամասերում:

Տնտեսավարման նոր պայմաններում արտադրական միավորումների և ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման ու զնահատման ժամանակ զգալի դեր է խաղում նաև մեկ ուրիշ ապրանքային արտադրանքին ընկնող ծախսումների իջեցման ցուցանիշը: Այն դառնում է ֆոնդակազմավորող հիմնական ցուցանիշներից մեկը, ուստի և մեկ ուրիշ ապրանքային արտադրանքին ընկնող ծախսումների իջեցման ցուցանիշը նույնպես պետք է պլանավորվի հիմնական արտադրամասերին:

Այսպիսով, տնտեսավարման նոր պայմաններում հիմնական արտադրամասերի պարտագիր կարգով նպատակահարմար է իջեցնել հետևյալ ցուցանիշները. օպերատիվության գործակիցը, զուտ արտադրանքով հաշվարկված աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը, արտադրության ընդհանուր ծավալում որակի բարձր կարգ ունեցող արտադրանքի տեսակարար կշիռը (արտադրանքի հանձնումն առաջին ներկայացմամբ և այլն), մեկ ուրիշ զուտ արտադրանքին ընկնող աշխատավարձի ծախսումների նորմատիվը, մեկ ուրիշ ապրանքային արտադրանքին ընկնող ծախսումների իջեցումը:

Ներարտադրական տնտեսական հաշվարկի իրականացման կարևոր պայմաններից մեկը հիմնական արտադրամասերի ինժեներատեխնիկական աշխատողների նյութական խթանման ճիշտ կազմակերպումն է: Ներկայումս խնդիր է դրված կատարելագործել նյութական խթանման համակարգը, առաջին հերթին հաշվի առնելով յուրաքանչյուր արտադրական կոլեկտիվի և առանձին աշխատողի կոնկրետ ներդրումը տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման և վերջնական արդյունքների ձեռքբերման գործում: Այն ենթադրում է պարզեցիկ խթանիչ ներգործության ուժեղացում արտադրության ինտենսիվացման և նրա արդյունավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջադիմության արագացման, աշխատանքի արտադրողականության աճի վրա, դրա չափերի ուղղակի կախվածության ապահովում արտադրության վերջնական արդյունքները բնութագրող ցուցանիշներից և լարված պլանային առաջադրանքներից: 11-րդ հնգամյակի ժամանակաշրջանում տրետեսական գործունեության հիմնական արդյունքների պարզեցման համակարգի գործնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք անբավարար էին ապահովում նշված կախվածությունը: Տնտեսական գործունեության հիմնական արդյունքների համար պարզեցման համակարգում նկատվող հիմնական թերություններն են պարզեցման քանակական և որակական բազմաթիվ ցուցանիշների առկայությունը, պարզեցման չափերի թույլ կախվածությունը արտադրության արդյունավետության ցուցանիշներից, պայմանագրային պարտավորությունների կատարումից և պլանային առաջադրանքների լարվածությունից: Տնտեսավարման նոր պայմաններում խիստ պարզեցվում է տնտեսական գործունեության հիմնական արդյունքների պարզեցման համակարգը: Նախ, կտրուկ կրճատվում է պարզեցման ցուցանիշների թիվը, երկրորդ, պարզեցիկ չափերն ուղղակի կախման մեջ են դրվում արտադրության արդյունավետությունն ու վերջնական արդյունքները բնութագրող ցուցանիշներից: Այսպես, տնտեսական գործունեության հիմնական արդյունքների համար պարզեցման վճարվում են երեք ինքնուրույն ուղղություններով, որոնք խթանում են արտադրանքի իրացման ծավալի (հաշվի առած պայմանագրային պարտավորությունների կատարումը), աշխատանքի արտադրողականության աճի, մեկ ուրիշ ապրանքային արտադրանքին ընկնող ծախսումների իջեցման ցուցանիշների պլանների կատարումը և գերակատարումը: Ընդ որում, յուրաքանչյուր ուղղությամբ սահմանվում է պարզեցման երկուսից ոչ ավելի ցուցանիշ՝ մեկը հիմնական, մյուսը՝ լրացուցիչ: Ցուրաքանչյուր ուղղության հիմնական ցուցանիշի թերակատարման ժամանակ տվյալ ստորաբաժանման աշխատողներն ավտոմատորեն ղրկվում են այդ ուղղությամբ տրվող պարզեցման

իսկ լրացուցիչ ցուցանիշի թերակատարման դեպքում հիմնական ցուցանիշի համար վճարվող պարգեք նվազում է, բայց 50%-ից ոչ ավելի:

Հիմնական արտադրամասերի ղեկավար և ինժեներատեխնիկական աշխատողների տնտեսական գործունեության հիմնական արդյունքների պարգևատրման համակարգի մշակման վերաբերյալ գոյություն ունի երեք մոտեցում: Առաջինի դեպքում հիմնական արտադրամասերի ղեկավար և ինժեներատեխնիկական աշխատողները պարգևատրվում են՝ ելնելով ձեռնարկության տնտեսական գործունեության ընդհանուր արդյունքներից, երկրորդի դեպքում ներառյալ պարգևատրումը միաժամանակ իրականացվում է՝ ելնելով ինչպես ձեռնարկության տնտեսական գործունեության ընդհանուր արդյունքներից, այնպես և հիմնական արտադրամասերի տնտեսաշարակալին գործունեության գնահատման առանձին ցուցանիշներից և, վերջապես, երրորդ մոտեցման դեպքում ղեկավար և ինժեներատեխնիկական աշխատողները պարգևատրվում են հիմնական արտադրամասերի տնտեսաշարակալին գործունեության գնահատման ցուցանիշների կատարման համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջին և երկրորդ մոտեցումները զերծ չեն թերություններից: Այսպես, առաջին մոտեցման դեպքում, փաստորեն, ղեկավար և ինժեներատեխնիկական աշխատողների պարգևատրման համակարգը կտրվում է այն արտադրամասերի գործունեության արդյունքներից, որտեղ նրանք աշխատում են: Երկրորդ մոտեցման դեպքում ղեկավար և ինժեներատեխնիկական աշխատողներին վճարած պարգևի ընդհանուր գումարի մեջ գերակշռում են ձեռնարկության տնտեսական գործունեության արդյունքների համար վճարած պարգևները, իսկ արտադրամասի տնտեսաշարակալին ցուցանիշները որոշակի չափով լրացնում են վերջինիս և դրանց դերն աննշան է: Կարծում ենք, ճիշտը երրորդ մոտեցումն է, քանի որ այն համապատասխանում է ներարտադրական տնտեսական հաշվարկի բուն էությունը, այսինքն՝ արտադրամասերի տնտեսական գործունեության գնահատման հիմքում դրվում են սեփական գործունեության արդյունքները:

Տնտեսավարման նոր պայմաններում որպես ձեռնարկությունների հիմնական արտադրամասերի տնտեսական գործունեության արդյունքների հիմնական պարգևատրման ցուցանիշներ նպատակահարմար է օգտագործել օպերատիվության գործակիցը (ռիթմիկության գործակիցը, արտադրանքայնության և բաժնի գրաֆիկով սահմանված անվանացանկի պլանի կատարումը և այլն), զուտ արտադրանքով հաշվարկված աշխատանքի արտադրողականության աճի տեմպը, մեկ ուրիշ ապրանքային արտադրանքին ընկնող ծախսումների իջեցումը: Որպես լրացուցիչ ցուցանիշներ պետք է օգտագործել արտադրության ընդհանուր ծավալում որակի բարձր կարգ ունեցող արտադրանքի տեսակարար կշիռը (արտադրանքի հանձնումը առաջին ներկայացմամբ և այլն), արտադրանքի թողարկման ռիթմիկությունը, աշխատատարության իջեցումը, աշխատավարձի ֆոնդի գերաժախսի բացակայությունը, սարքավորումների օգտագործման գործակիցը: Ընդ որում, ձեռնարկություններում արտադրամասերի տնտեսական գործունեության հիմնական արդյունքների պարգևատրման հիմնական և լրացուցիչ ցուցանիշների ընտրության հարցը լուծվում է՝ ելնելով արտադրամասերի ֆունկցիաներից և առանձնահատկություններից:

Այսպիսով, արտադրական միավորումների, ձեռնարկությունների հիմնական արտադրամասերի տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման առաջարկվող ցուցանիշների համակարգը արտադրական կոլեկտիվներին նպատակամղում է արտադրության մեջ գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների և առաջավոր փորձի ներդրմանը, պայմանագրային պարտավորությունների անվերապահ կատարմանը, արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և արտադրանքի որակի բարձրացմանը:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ ВНУТРИПРОИЗВОДСТВЕННОГО ХОЗРАСЧЕТА В НОВЫХ УСЛОВИЯХ ХОЗЯЙСТВОВАНИЯ

АКОП МАРУТЯН

Р е з ю м е

Перевод производственных объединений (предприятий) на новую систему планирования и экономического стимулирования неразрывно связан с дальнейшим развитием внутрипроизводственного хозрасчета. Одной из узловых проблем совершенствования внутрипроизводственного хозрасчета является правильный выбор системы показателей планирования, оценки и стимулирования внутренних подразделений производственных объединений (предприятий).

Руководящие и инженерно-технические работники основных цехов должны премироваться за выполнение хозрасчетных показателей оценки их деятельности. Исходя из этого, необходимо применять новую систему показателей планирования, оценки и стимулирования основных цехов, которая устанавливает связь результатов их работы с конечными результатами хозяйственной деятельности производственных объединений (предприятий), нацеливает на внедрение в производство научно-технических достижений и передового опыта, на безупречное выполнение договорных обязательств, эффективное использование производственных ресурсов и повышение качества продукции.